

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

21.06.2023



## **Առողջապահական համակարգի սիրելի՛ աշխատակիցներ**

Շնորհավորում եմ բոլորիդ հունիսի 21-ի՝ Բուժաշխատողի օրվա առթիվ:  
Ձեր մասնագիտության ներկայացուցիչները միշտ առանձնահատուկ հարգանք են վայելել ազնվագույն գործին իրենց նվիրումի շնորհիվ:

Օրվա կապակցությամբ շնորհավորում եմ նաև ոլորտի վետերաններին:

Մարդու առողջության մասին հոգ տանելու առաքելությունը բարդ է ու պատասխանատու, իսկ ձեր աշխատանքը պահանջում է փորձի, գիտելիքի, արհեստավարժության ու խղճի համատեղում, հաճախ՝ նաև անձնագոհություն:

Շնորհակալ եմ կատարած բարեխիղճ աշխատանքի ու մասնագիտությանը նվիրումի համար:

Մեր բոլոր պատերազմներում, ցավոք, կորուստներ եղան նաև ձեր շարքերում, երբ կյանքեր փրկելիս՝ ձեր գործընկերներն իրենց կյանքն են զոհել. մեր խոնարհումը նրանց հիշատակին:

Սիրելի՛ բուժաշխատողներ, մաղթում եմ, որ միշտ վայելեք բուժված մարդկանց գնահատանքն ու անկեղծ երախտագիտությունը:

Մարզի բոլոր բնակիչների անուկից մաղթում եմ ձեզ խաղաղություն, քաջառողջություն, մասնագիտական ձեռքբերումներ, բարեկեցություն՝ ձեզ ու ձեր ընտանիքներին: